[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
26	Հունիս	2019 թ.		Ա	7191539808
[4] Մատակարարման ամսաթիվ					
26	Հունիս	2019 թ.		Ճշգրտվող հաշվի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	1	5	0	3	4	4	8		
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	1	5	0	3	4	4	8	/	1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ			N 11500166513800						
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի										
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն			N 900011000834						
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ռում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (քանակությունը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	44154419 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
անուն, ազգանուն

26/06/2019 14:45:55

Ստացող

պաշտոն ստորագրությունը (անուն, ազգանուն)

պաշտոն ստորագրությունը (անուն, ազգանուն)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

30.04.2019թ. ք.Մասիս

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ՝ Ե.Ն.Թորոսյանս, քննարկելով թիվ 44154419 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2019 թվականի փետրվարի 04-ին, ժամը՝ 14:30-ի սահմաններում Աստղիկ Հարությունյանն իրենց տանը՝ Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղի Երևան-Արտաշատ խճուղու 41-րդ տան հասցեի ավտոտնակում ինքնասպանության նպատակով խմել է պլաստմասե 22ի մեջ լցված մոտ 300 գրամ ,,Բ-58,, տեսակի թունաքիմիկատ:

Դեպքի առթիվ ոստիկանության Մասիսի բաժնում 12.02.2019թ. ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 44154419 քրեական գործը:

2019 թվականի փետրվարի 15-ին թիվ 44154419 քրեական գործը ոստիկանության Մասիսի բաժնից ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժին, որի նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ:

Նախաքննության ընթացքում որպես տուժող հարցաքննված Աստղիկ Հարությունյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2019 թվականի փետրվարի 04-ին առավոտյան ժամը 10:30-ի սահմաններում արթնացել է, սուրճ է խմել և դուրս է եկել տան բակ, որի ընթացքում հեռախոսով նկարվել է:Այդ պահին իրենց տուն է եկել իրենց բարեկամ՝ Զոյա Հարությունյանը, որի ժամանակ մայրը՝ Մարիա Հարությունյանը տանից դուրս է եկել և իրեն ասել է, որ <տունը մարդ է եկել արի տուն սուրճ պատրաստի, ամոթ է կասեն ինչ աղջիկ ես տունը մարդ է եկել դու չես գալի, Զ.Խաչատրյանը կմտածի, որ եկել է մեր տուն այդ պատճառով տուն չես գալիս>, այդ ընթացքում ինքը Մ.Հարությունյանի պատասխանել է, որ Զ.Խաչատրյանն իր համար չի եկել և չի բարձրացել տուն: Այնուհետև գնացել է իրենց տան կողքը գտնվող ավտոտնակ, որի ժամանակ նյարդայնացած և հուզված է եղել, նկատել է տան բակի ծառերին սրսկվող <Բ.58> տեսակի թունաքիմիկատը, չհասկանալով ինչ է կատարվել իր հետ, այն վերցրել է և ամբողջությամբ խմել է, դրանից հետո մոտ 5 րոպե իրեն լավ է զգացել և քայլելով գնացել է դեպի տան մոտ տեսնելով մորը հայտնել է, որ ծառերի սրսկման <Բ58> տեսակի թունաքիմիկատ է խմել: Այնուհետև մայրը օգնություն է ցույց տվել, որից հետո իր ինքնազգացողությունը վատացել է, այնուհետև իրեն տարել են <Մուրացան> ԲԿ, որտեղ 7 օր պարկելուց հետո դուրս է գրվել, ներկա պահին իրեն շատ լավ է զգում: Հասկացել է, որ շատ վատ քայլ է կատարել, չի կարող բացատրել ինչո՞ւ է նման կերպ վարվել, ոչ ոք մեղավոր չի իր կողմից ինքնասպանության փորձ կատարելու մեջ, այդ քայլի համար ինքը զղջացել է կատարվածի համար:Երբ այդ <Բ58> տեսակի թունաքիմիկատը խմել է ցանկացել է կյանքին վերջ տալ, սակայն խմելուց անմիջապես հետո փոշմանել է և չի գիտակցել ինչ է արել:

Նախաքննության ընթացքում որպես վկա հարցաքննվել է Աստղիկ Հարությունյանի մայրը՝ Մարիամ Հարությունյանը, ով ցուցմունք է տվել այն մասին, որ դուստրը՝ Աստղիկ Հարությունյանը հոգեպես առողջ է և հոգեկան առողջության դեմ բուժօգնություն չի ստացել:

Աստղիկ Հարությունյանը բնավորությամբ տաքարյուն է և կռվարար, շուտ բռնկվող, ամեն հարց թեթև չի տանում, ավելին՝ ամեն ինչ ծանր է տանում և բնավորությամբ բարդ մարդ է: 2019 թվականի փետրվարի 04-ին ընտանիքի բոլոր անդամներով տան են եղել, երբ իրենց տուն հյուր է եկել Զոյա Խաչատրյանը: Երբ Ա.Հարությունյանը տան բակում լուսանկարահանվելուց է եղել, ինքը նրան տուն է կանչել, որպեսզի մի բանով օգնի իրեն, քանի որ սկեսուրը՝ Ա.Հարությունյանը տանը հիվանդ պառկած է եղել: Այդ ընթացքում Աստղիկ Հարությունյանը պատասխանել է, որ քիչ հետո կգա և այդպես չի եկել պատճառաբանել է, որ Զոյա Խաչատրյանը իր համար չի եկել և չի ցանկանում տուն գալ: Այդքանից հետո ինքը զայրացել է Աստղիկ Հարությունյանի վրա և ասել է <հիմա ինչ կմտածի Զոյան նա մեր տուն է եկել, իսկ դու դուրսն էս արի գոնե սուրճ պատրաստի ամոթ քեզ, մեծ աղջիկ ես, քեզ նման բան չի սազում >: Այնուհետև ինքը գնացել է սուրճ պատրաստելու, որից հետո պատուհանից ձայն է տվել Ա.Հարությունյանին, որպեսզի գա սուրճ ըմպի: Այդ ընթացքում նա հրաժարվել է սուրճ ըմպելուց:Ինքը սուրճ ըմպելուց հետո տանից դուրս է եկել գնացել է դստերը ձայն տա, որպեսզի նա գա և սուրճը ըմպի: Այդ ընթացքում, երբ հասել է տան հետնամաս տեսել է, որ Աստղիկին, ում շրթունքները կարմրած է եղել և նրա վրայից հոտ է եկել :Այդ հոտից զգացել է, որ <Բ58> տեսակի թույն է խմել: Երբ Աստղիկին տեսել է այդ վիճակում նա հայտնել է, որ լավ չի զգում:Այնուհետև ինքը թան և սոդայաջուր է տվել, որից հետո զանգահարել են շտապօգնություն և տեղափոխել են <Մուրացան բժշկական կենտրոն>, որտեղ մոտ 7 օր ստացել է ստացիոնար բուժօգնություն, այնուհետև դուրս է գրվել: Հայտնել է նաև, որ Աստղիկ Հարությունյանի առողջական վիճակը կայուն է, նա շատ լավ է զգում և չափից շատ փոշմանել է, որ նման քայլի է դիմել: Նա զղջացել է կատարածի համար և այլևս նման քայլ չի կատարի: Հայտնել է նաև, որ ինքը դստեր հետ գտնվում է շատ լավ հարաբերությունների մեջ:Ինքը Ա.Հարությունյանին երբեք չի ծեծել, չի սպառնացել, դաժան վերաբերմունքի չի արժանացրել, նվաստացնող վիրավորանքներ չի տվել, ինքը նրան շատ է սիրում: Հայտնել է նաև, որ Ա.Հարությունյանը որևէ մեկի հետ թշնամական հարաբերությունների մեջ չի գտնվել, որևէ աղանդավորական խմբակցության չի մասնակցել: Բացառել է, որ որևէ մեկը կարող է մեղավոր լինել աղջկա կողմից կատարված ինքնասպանության փորձի մեջ, ոչ մեկ նրան որևէ ձևով չի սպառնացել, նրա հետ դաժան չի վերաբերվել, նրա անձնական արժանապատվությունը չի նվաստացրել և նա այդ քայլին է գնացել իր բնավորության բարդ լինելու պատճառով:Բացառել է նաև, այն հանգամանքը, որ իր կողմից Ա.Հարությունյանին տված ամոթանքից՝ մասնավորապես որ ասել է <ամոթ քեզ, մեծ աղջիկ ես, ինչի ես քեզ նման կերպ պահում արի օգնի ինձ > այդ բառերից վիրավորված լինի և նման քայլի գնացած լինի: Յուրաքանչյուր մայր զայրանում է իր երեխաների վրա դա ուղակի այդ զայրույթներից մեկն է եղել:

Նախաքննության ընթացքում որպես վկա հարցաքննվել են Աստղիկ Հարությունյանը հայրը՝ Յուրիկ Հարությունյանը, եղբայրը՝ Վոլոդյա Հարությունյանը, Զոյա Հարությունյանը ընկերուհի Սոֆի Դավթյանը, հարևանությամբ բնակվող Սոնա Անմեղիկի Արշակյանը, ովքեր իրենց ցուցմունքներով հայտնել են, որ Աստղիկ Հարությունյանը գտնվում է հոգեպես առողջ վիճակում, ոչ ոք նրան երբեք չի ծեծել, չի սպառնացել, դաժան վերաբերմունքի չի

արժանացրել, նվաստացնող վիրավորանքներ չի տվել: Ա.Հարությունյանը որևէ մեկի հետ թշնամական հարաբերությունների մեջ չի գտնվել, որևէ աղանդավորական խմբակցության չի մասնակցել: Բացառել է, որ որևէ մեկը կարող է մեղավոր լինել վերջինիս կողմից կատարված ինքնասպանության փորձի մեջ:

Նկատի ունենալով, որ մի շարք հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են դատահոգեբանակն հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-244 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Վարույթումս գտնվող թիվ 44154419 քրեական գործով նշանակել դատահոգեբանական փորձաքննություն, որի կատարումն հանձնարարել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի բժշկական հոգեբանության ամբիոնի հոգեբան-փորձագետներին՝ Գայանե Հակոբի Ղազարյանին և Անահիտ Տեր-Ստեփանյանին:

2.Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Ի՞նչ հոգեվիճակում է գտնվել Աստղիկ Հարությունյանը ինքնասպանության փորձին նախորդող ժամանակաշրջանում:

բ/ Անչափահաս փորձաքննվող Աստղիկ Յուրիկի Հարությունյանը ինքնասպանության փորձ կատարելիս գտնվել է արդյոք այնպիսի հուզական վիճակում /հոգեկան լարվածություն, ֆրուստրացիա, սթրես և այլն/, որը կարող էր էապես ազդել նրա գիտակցության և հոգեկան գործունեության վրա և նա ինքնասպանության փորձ կատարել:

գ/ Ինչպիսի՞ անհատական-հոգեբանական առանձնահատկություններ ունի փորձաքննվող Աստղիկ Յուրիկի Հարությունյանը, որոնք կարող էին էապես ազդել տվյալ իրավիճակում նրա վարքի վրա:

դ/ Հաշվի առնելով փորձաքննվողի անհատական և հոգեբանական առանձնահատկությունները, ինտելեկտուալ անձնային զարգացման մակարդակը և հետազոտվող իրավիճակի բովանդակությունը կարո՞ղ էր արդյոք ադեկվատ ձևով ըմբռնել և վերարտադրել իրականությունը և նախաքննության ընթացքում կարևոր հանգամանքների մասին տալ ճիշտ ցուցմունքներ:

3.Փորձագետին խնդրել՝ պատասխանել նաև այն հարցերին, որոնք, թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակության ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

Փորձագետին պարզաբանել ՀՀ քր.դատ.օր.-ի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի պարտականություններն ու իրավունքները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քր.օր.-ի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

4. Քրեական գործի նյութերը և անհրաժեշտ այլ փաստաթղթերը կներկայացվեն համապատասխան միջնորդության հիման վրա:

Քննիչ Ե.Ն.Թորոսյան